Թեստային հարցերի օրինակելի նմուշներ*

Ծննդօգնության հիվանդանոցային հաստատությունների
մանկաբարձ-գինեկոլոգների թեստավորման

Թեստ 1.

Ծննդաբերական տրավմաների պատճառ կարող են հանդիսանալ
1. աքցանների կիրառումը
2.պտղաթաղանթների վաղաժամ պատռումը
3.խոշոր պտղով ծննդաբերությունը
4.կայծակնային ծննդաբերությունը
ա) 1.2.4
բ) 2.3
գ) 1.3
դ) 1.3.4

Թեստ 2.
Արտարգանդային հղիության փողային վիժման դեպքում կլինիկական պատկերին բնորոշ է՝
1.գլխապտույտ
2.ցավի ճառագայթում ուղիղ աղիք, ազդր
3.առատ լոռանման արտադրություն սեռական ճեղքից
4.ցավ զստափոսերից մեկում
ա)1.2.3
բ) 2.3.4
գ)1.2.4
դ)1.3.4

Թեստ 3.
Ծննդաբերության սկզբը բնորոշում է՝
ա)պտղաջրերի արտահոսքը
բ)պտղի գլխի ներդրումը կոնքամուտքում
գ)կանոնավոր կծկանքների առաջացումը

դ)արգանդի պարանոցի լրիվ բացումը

Թեստ 4. Արյունահոսության պատճառները հղիության առաջին կեսում բոլորն են, *ԲԱՑԻ՝*

ա) արտարգանդային հղիություն

բ)հղիության վաղ տոքսիկոզ

գ)ինքնաբեր վիժում

դ)արգանդի վզիկի քաղցկեղ

Թեստ 5.

Նորածինների շնչառական դիստրես համախտանիշի կանխարգելման նպատակով կիրառվում են.

ա)Պրոգեստերոն

բ)$MgSO_4$

գ)Կորտիկոստերոիդներ

դ)Բետա-միմետիկներ

Թեստ 6.

Ծննդաբերության ժամանակ վակուում-էքստրակցիայի համար անհրաժեշտ են բոլոր պայմանները, *ԲԱՑԻ՝*

ա)արգանդի պարանոցի ոչ լրիվ բացում

բ)պտղապարկի բացակայություն

գ)պտղի գլխի և կոնքի չափսերի լրիվ համապատասխանություն

դ)կենդանի պտուղ

**** Թեստավորման արդյունքում յուրաքանչյուր թեստի համար ենթադրվում է մեկ ճիշտ պատասխան:***